

ՄԱՍՈՒԼԻ ԳՐԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԼՐԱՅՈՍԻ
ԼԿԱՏՄԱՍԲ ԿԻՐԱՌՎՈՂ ԱՐԳԵԼՔՆԵՐԸ
ՕՍՄԱՆՅԱՆ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ 1914-1916ԹԹ.
ՏԻԳՐԱՆ ՍԱՅԱԿՅԱՆ

Առաջին աշխարհամարտի սկզբից երիտթուրքական իշխանությունները, աստիճանաբար պլանավորելով և իրականացնելով արևմտահայության ցեղասպանությունը, ձեռնամուխ եղան ինչպես երկրի տարածքում, այնպես էլ երկրից դուրս տեղեկատվության հոսքի սահմանափակմանը: Արգելվեց ամեն տեսակի տեղեկատվության հավաքումը, տարածումը և, առհասարակ, շարժը առանց իշխանության համապատասխան մարմինների քննության և թույլատվության: Իրենց աչքի առաջ ունենալով մալտրոդների, հատկապես Աբդուլ Համիդի փորձը, նրանք երկրում մանրակրկիտ գրաքննություն հաստատեցին:

Թուրքիայի տարածքում և նրա սահմաններից դուրս լրահոսի դեմ կիրառվող արգելքները, հատկապես, Թուրքիայի պատերազմի մեջ մտնելուց և առաջին պարտությունները կրելուց հետո անմախաղեպ չափերի և դաժանության հասան: Ինչպես երկրի ներսում, այնպես էլ երկրից դուրս սկսվեց ապատեղեկատվության տարածումը, որը, հիմնականում, ուղղված էր երկրի հայ ազգաբնակչության դեմ:

Թուրքական իշխանությունների նման քաղաքականությունը նպատակ ուներ.

1. երկրի բնակչությանը զրկել իրական տեղեկատվությունից, դրանով իսկ պատերազմական գործողությունների ընթացքում ազատություն ստանալ իրենց արաքների մեջ, ինչպես նաև առժամանակ քողարկել մեկ մյուսի հետևից կրած պարտությունները,

2. երկրի տարրեր նահանգներում հայ ազգաբնակչության հատվածներին կտրել միմյանց հետ հաղորդակցվելու հնարավորությունից՝ նրանց զրկելով միմյանց արագ օգնություն հասնելու հնարավորությունից, ինչպես նաև, զրկելով տեղեկատվությունից, թույլ չտալ կանխազգալ իշխանությունների կողմից կազմակերպվող ցեղասպանությունը,

3. միջազգային հանրությունից քողարկել Թուրքիայի տարածքում տիրող վիճակը, հայության նկատմամբ իրականացվող հալածանքների, բռնությունների, թալանի և ջարդերի իրական պատկերը, այդպիսով կանխելով միջազգային հանրության, հատկապես չեզոք երկրների զալրուրդը և միջամտությունը,

4. ապատեղեկատվության միջոցով երկրի մահմեդա-

կան ազգաբնակչությանը հրահրել ընդդեմ հայության, նրանց օգտագործել՝ իրականացնելու համար իրենց հայահալած քաղաքականությունը,

5. հերքել հայերի հալածանքների, տեղահանության, կոտորածների մասին միջազգային հանրությանն այս կամ այն կերպ հասած իրական տեղեկությունները՝ դրանք պատճառաբանելով պատերազմական իրադրությամբ և ողջ մեղքը բարդելով հայերի վրա, դրանով իսկ արդարացնել պատերազմական գործողությունների ընթացքում Օսմանյան կայսրության տարածքում բնակվող հայ ազգաբնակչության նկատմամբ կառավարության կողմից իրականացվող գործողությունները:

Երկրի տարածքում, ինչպես նաև նրա սահմաններից դուրս լրահոսի դեմ թուրքական իշխանությունների իրականացրած առաջին քայլը երկրում գրաքննության հաստատումն էր, որն իր ամբողջ ուժով ուղղվեց, առաջին հերթին, մամուլի դեմ: Մամուլի գրաքննությունը և, ընդհանրապես, գրաքննությունը թուրքիայում նորությ չէր և ապացուցել էր իր արդյունավետությունը թուրքական կառավարողների ջարդարարական քաղաքականությունների ընթացքում:

Մամուլի օսմանյան գրաքննությունը սկիզբ է առել XIX դարի 60-ականներից և իր խոր կնիքը դրել երկրում հրատարակվող պարբերական մամուլի նկարագրի վրա: Ի տարբերություն գրքերի նախնական գրաքննության, որ հաստատվել էր 1857թ. («Օրենք տպարանների մասին»), պարբերական մամուլը մինչև 1880-ականները վերահսկողության է ենթարկվել հիմնականում ետտպագրական գրաքննության միջոցով: Պարբերական մամուլի զարգացմանը զուգընթաց մամուլի իրավական դրության վերաբերյալ ձեռնարկվեցին մի շարք օրենսդրական միջոցառումներ: 1862թ. ստեղծվեց տպագրական տեսչություն, որը մայրաքաղաքում մամուլը վերահսկում էր անմիջականորեն, իսկ գավառներում՝ վալիների միջոցով: Այնուհետև, 1864թ. դեկտեմբերի 31-ին հրապարակվեց տպագրական օրենք, որը նախնական գրաքննություն չէր հաստատում, սակայն մամուլը դնում էր օրինապաշտության նեղ սահմանների մեջ: Այդ օրենքն անգիտանում էր մամուլի, խմբագիր-հրատարակիչների տարրական իրավունքները և հալածանքի ու հետապնդումների ընդարձակ հնարավորություն էր ընձեռում վարչական իշխանավորներին:¹

Արտաքուստ ազատամտության հավակնող այս տպագրական օրենքն անհանգստացրեց իրենց իսկ՝ թուրքական կառավարողներին: 1876թ. «նոր օսմանների» քաղաքական ակտիվացման (մինչև Աբդուլ Համիդի գահակալումը) և Օսմանյան սահմանադրության ու դրան հաջորդող մի կարճ ժամանակաշրջանում, ինչպես ամբողջ թուրքիայում հրատարակվող պարբերականները, այնպես էլ արևմտահայ մամուլն, այս կամ այն չափ փորձում էր օգտվել որոշ թողտվությունից և բացահայտելով հայ հարստահարվող գավառի իրավիճակը՝ արտահայտել ազգային միտումներ:² Սակայն ստեղծելով փոքրիշատե արտաքին քաղաքական կայունություն և աստիճանաբար հաղթահարելով Բեռլինի կոնգրեսի դիվանագիտական պատվարները, Աբդուլ Համիդ II-ը ծավալեց իր բռնակալական վարչակարգը: Հաստատվեց նախնական դաժան գրաքննություն: «Միստ հսկողության տակ առնվեցին հայ պաշտոնյաները և հայկական հրատարակությունները... Հրահանգ տրվեց մամուլի գրաքննչական վարչությանը՝ արգելել «Հայաստան» բառի, հայ ժողովրդի պատմությանը և աշխարհագրությանը վերաբերվող անունների հիշատակումը»:³ Խիստ գրաքննության

շրջան, որը մեծագույն ոգևորություն առաջացրեց արևմտահայ մտավորականության շրջանում: «Ա՛հ, ինչ ծանր անարգանք էր մարդկային հաճախումն այն ատելի ու անմիտ գրաքննության ներկայությունը մամուլն քով: Այդ խավարի պաշտոնայք խույս տվին լույսեն, կը հուսանք, որ ալ չվերադառնան», - գրում է Թեոդիկը իր «Ամենուն տարեցոյցում»¹¹, այնուհետև պատմաբան Լեոյին գրած նամակում հայտնում. «Մամուլի ազատություն տրվեցավ մեզ թուրքահայոց: Նախանձախնդիր եղած են հետզհետե ծանոթացնելու լընթերցողին - Տ. Ս] ռուսահայոց գրողները՝ իրենց գրչով»:¹² Կտրուկ աճեց հրատարակվող պարբերականների քանակը: Սա հնարավորություն տվեց հայ պարբերական մամուլին արծարծել հասարակական, քաղաքական, տնտեսական և մշակութային կարևոր խնդիրներ, փորձել բարձրացնել ազգային ինքնագիտակցությունը, նպաստել լուսավորության, համակողմանի կրթության և հայ ինքնությունը գրականության զարգացմանը: 1913-1915թթ. Թեոդիկն «Ամենուն տարեցոյցը»-ում տեղ հատկացրեց «Տխուր խապրիկներ երկրեն» բաժնին, քեպետ հայտնի էր, որ «Տպագրական տեսչության մզլոտ հարկերուն տակ վեստին իր կեղակարծ ներկայությունն էր դրել» գրաքննությունը, որի նպատակն էր «սանձել մասնավորապես իրերապարսավ պայքարը» և, հատկապես, այն լրագրողներին, որոնք «իրենց կապաւնքները թոթափած... տարիներու բռնակալության դեմ քինահույզ հարձակումներ էին գործում»:¹³

Սակայն այս քսրենպաստ ժամանակաշրջանը շուտով ավարտվեց, և երիտթուրքերը, մոռանալով հեղաշրջման ընթացքում Թուրքիայում բնակվող իրենց սատարած ազգերի ներկայացուցիչներին տված խոստումները, սկսեցին երկրում խոսքի ազատությունը սահմանափակող քայլեր ձեռնարկել: 1909թ. ապրիլին կազմակերպված Կիլիկիայի հայության ջարդերից հետո երիտթուրքական իշխանություններն օր օրի սաստկացրին մամուլի նկատմամբ հետապնդումները: Երկրում հրատարակվող բոլոր հայ պարբերականները դրվեցին գրաքննչական հսկողության տակ: Մամուլի նկատմամբ արգելքները նոր ծավալում ստացան Առաջին աշխարհամարտի սկզբում և առավելագույն չափերի հասան Ռուսաստանի և Թուրքիայի միջև ռազմական գործողությունների ընթացքում: «Մինչև ռուս-տաճկական ընդհարումը հոս վիճակներս աղեկ չէր, - կարդում ենք «Հորիզոնին» հասցեւորված՝ Կ. Պոլսից ստացված նամակում, - գորաւշարժ էր և ռեքիզիսիոն կամ կառավարական գրավում: Սակայն այն ատեն զոնե կիմանայինք, թե դուրսերը ինչ կը կատարվի: Իսկ ռուս-տաճկական պատերազմի հայտարարությունից աստի՛ն, աշխարհեն այլևս ամբողջովին կտրվեցանք, և վիճակներս երթալով ավելի և ավելի վատթարացավ»:¹⁴ Եվրոպայում պատերազմի սկսվելուն պես Թուրքիայի մամուլն ինքնաբերաբար երկու մասի բաժանվեց: Ինչպես հաղորդում է «Հորիզոնի» թղթակից Արլոն «Թուրքական թերթերը անխտիր սկսեցին Գերմանիայի թմբուկը զարնել (փողն էլ քիչ դեր չխաղաց), իսկ հայ և հույն մամուլը հակվեց Եռյակ համաձայնության կողմը, այնպես, որ զերմական դեսպանատունը թուրքական զինվորական ցեղգուրային շարունակ զանգատվում էր այս կամ այն թերթի ուղղության մասին և նույնիսկ մասնավոր մատնանշումներ անում»:¹⁵

Թուրքիան իր երևութական չեզոքությունը փրկելու համար թեև թույլ էր տալիս Եռյակ համաձայնության պաշտոնական զեկույցները հրատարակել, բայց գրաքննությունն օր ըստ օրե ուժեղացնում էր ճնշումը հայ և հույն թերթերի վրա՝ նրանց ստիպելով չհրապարակել նյութեր՝ հոգուտ

Գերմանիայի թշնամիների: Այսպես մի օր զինվորական քննիչ Մյուհետտին շատ անկեղծ կերպով գոռում է գրաքննիչների վրա. «Անացեք այդ դա՛գեթաճի էֆենտիներին, որ Գերմանիային հակառակ կամ անմպաստ ոչ մի գրություն լույս չպիտի տեսնե թերթերում, էլ քավակա՛ն է»: Եվ այս հայտարարությունից հետո դեռ մի ամիս Թուրքիան չեզոք էր և միշտ խաղաղասիրական հավաստիացումներ էր տալիս լավատես դեսպաններին:¹⁶

Ինչպես վկայում է Էրզրումի վարժարանների միացյալ ընկերության տնօրեն Ա. Պապաջայանը, Թուրքիայում պատերազմական դրություն հայտարարվելուց հետո «Պատրիարքարանն ու առաջնորդարանները լռեցին: Ժողովուրդը (տաճկահայ) աստիճանաբար ընկավ մեռելության գիրկը: Դպրոցները փակվեցին, ուսուցիչները ամենքն զորք տարին: Թերթի անվան տակ երկու թերթեր մնացին՝ «Բյուզանդիոն» և «Ազատամարտ», որոնք մեկ-մեկ փոքրիկ գումավոր երեսների էին վերածվել...»:¹⁷ Իսկ 1915թ. ապրիլին «Մշակ» լրագրին ուղարկած «Գաղթական» հեղինակի «Ի՞նչ վիճակի մեջ են հապա Թիւրքիոյ ձեռքը մնացած մեր եղբայրները» հոդվածում կարդում ենք. «Ճիշտ ու՞ք ամիս է, որ դժբախտ թուրքահայությունը զրկուած է աշխարհի յարաբերութիւններե՞ն՝ իր ամբողջ զաւակներով, տունով-տեղով, մամուլով, պատրիարքարաններով, կրթական հաստատութիւններով. երկրագործական և առևտրական գործերով միասին ճգմված ու քայքայված դրութեան մը մեջ կը քաշքշէ օրհասական կեանք...»

1914թ. յուլիսի 21-էն բռնաշունչ կերպով սեֆերերիլք և իրադիւորֆի (պատերազմական վիճակ) հրատարակելուն շնորհիվ Թիւրքիոյ մեջ երթալով հաղորդակցութիւնը ու տեղեկութիւնները ընդհատուեցան: Իսկ կառավարական մամեօվրաները և ոչ մեկ մահկանացուի մատչելի կրնային ըլլալ: Արդեն օգոստոս-հոկտեմբերին պատրիարքարանը, առաջնորդարաններն ու ազգային վարչութիւնք խստիվ լռեցուցին: Լրագիրները (օրաթերթերը) մեկ-մեկ խղճուկ, դժգոյն երեսիկներու վերածուծ էին, որոնք Վօլֆի գործակալութեան սուտերը հազիվ կրնային պարունակել, շատ-շատ՝ սուլթանին ուղղեալ փոքր ինչ գովասանքներ:

Քանի որ թղթատարութեան միջնատրը կը մնար հայազգի Մարտիկեան էֆենդին (որը շուտով հրաժարվեց պաշտոնից և անցավ Եվրոպա - Տ. Մ.) և քավական կը պայքարեր, անոր շնորհիվ վիլայեթներուն և Կ. Պոլսոյ մեջ նամակներ կրնային փոխադրել»:¹⁸

Ահա այսպիսին էր Թուրքիայում պարբերական մամուլի կացությունը նախքան Թուրքիայի մուտքը պատերազմ: Վիճակն ավելի վատթարացավ պատերազմին Թուրքիայի մասնակցությամբ: «Էլ ամեն մի բառ, ոճ, դարձվածք կասկածելի էր և անխնա ջնջվում էր»: Թերթերը պարտավորեցրին ամեն օր իրենց համարներից 5 օրինակ հանձնել զինվորական գրաքննությանը, 5 օրինակ՝ տպագրական տեսչությանը, 3 օրինակ՝ զինվորական առյանին, 3 օրինակ՝ Կ. Պոլսի զինվորական հրամանատարին, 2 օրինակ՝ ընդհանուր ապահովությանը (ոստիկանական դեսպարտամենտին), 4 օրինակ՝ մեարիֆին (կրթության նախարարությանը), 2 օրինակ՝ ընդհանուր դատախազությանը: Ընդ որում այդ 7 հաստատություններից յուրաքանչյուրն իրավունք ուներ իրենց դիտողություններն անել և պահանջել թերթի փակումը»:¹⁹ Արդյունքում՝ համարյա յուրաքանչյուր օր արդեն պատրաստի համարներից գրաքննության պարտադրանքով բազմաթիվ հատվածներ էին հանվում: Ավելին՝ օսմանյան գրաքննությունը թերթերի խմբագիրներին պարտավորեցնում էր գրաքննությամբ արգելված հոդված-

ների տեղը լրացնել, որովհետև քաց թողնելը «մտքերի գրգռություն կը պատճառեք» և ավելորդ անբարենպաստ խոսակցությունների առիթ կհամ-դիսանաք: Եվ շատ անգամ թերթերը ժամանակին լույս տեսնելու համար ստիպված էին լինում մի օր առաջվա համարի համար մախատեսված հոդվածներից մեկը հրատարակել:²⁰

«Ռուս-թուրքական պատերազմի սկսվելուն պես այլևս ամեն կեանք ու շարժում Թիւրքիոյ մեջ կաշկանդման դատապարտվեցաւ և «ամեն ինչ պատերազմին պետք է պատկանի» հրատարակուեցաւ: Այդ սխտեմին տակ մենք ակամատես եղանք, որ ամեն անհատ հազիւ կրնար իր մորթին վրայ մտածել», - կարդում ենք «Մշակում»:²¹

Թուրքիայի և, մասնավորապես Կ. Պոլսի հայ պարբերական մա-մուլի դրության վերաբերյալ Կ. Պոլսից 1915թ. փետրվարին «Հորիզոնի» խմբագրություն ուղարկած իր նամակում բավական հետքերի տեղեկու-թյուններ է հաղորդում «Մարտիկ մը» ստորագրությունով հեղինակը: Ըստ նրա բնակչությունը «...ոչինչ գիտի դուրսի աշխարհին: Ոչինչ գիտի թե ինչ կը կատարվի ռազմադաշտերու մեջ: Կուգես հավատա, կուգես մի հավա-տա, պիտի կարդաս տեղական ապուշ թերթերը, լեցուն զգալի սուտերով, գերագոգոռո ջրովորասիռներով (հրահրումներով - Տ. Մ.), շինծու և այլան-դակ զգացումներով: Դժբախտաբար և ոչ մեկ բացառություն կա տեղական թերթերում մեջ: Սորված էինք «Ազատամարտը» միշտ քիչ մը տարբեր տեսնալ մեկ ալ հայատառ դեղին մամուլեն, այսօր ան ալ ինկած է նոյն վիճակին ինչ որ մյուսները... Գոնե մյուսներեն մեկ երկուքը գիրենք գերմա-նասեր ցուցանելով, ամսական քանի մը ոսկի կը փրցուցեն գերման դեսպանատունեն, իթքիհատեն, կառավարությունեն... Իսկ «Ազատամար-տը» այդ առաքինությունեն զուրկ է. խտիպեալ գերմանասիրություն կը-նէ...»:²² Ու նաև՝ «... ստիպված ենք անվերջ կարդալ թուրքական զեկույցներն ու Վուֆ-Պյուրտի միալար կեղծիքները, կամ ավստրական զեկույցները, ապուշության այդ գլուխգործոցները, որոնք նոր ու նոր բառեր կը հնարեն, դարձվածքներ կը ստեղծեն՝ իրենց պարտությունը քողարկելու համար...»:²³

Իրոք՝ թուրքական իշխանություններն առանձնակի ուշադրություն էին դարձնում կայսրության բնակչությունից ռազմական անհաջողություն-ները քաքցնելու պարագայում: Ինչպես հայտնի է՝ թեև անգլո-ֆրանսիա-կան մավատորմի կողմից ձեռնարկված Դարդանելի օպերացիան (1915թ. փետրվարի 19-ից մինչև մարտի 18-ը) ավարտվեց դաշնակիցների զորքերի նահանջով, շնորհիվ գերմանո-թուրքական զորքերի կազմակերպված հաջող պաշտպանության, այնուամենայնիվ դաշնակիցներին հաջողվեց Թուրքիային հասցնել պատասխան հարված, որի արդյունքում դաշնակից-ները գրավեցին Բաղդադը և Պաղեստինը: Այս ամենից և, հատկապես, Բաղդադի գրավումից հետո թուրքական իշխանություններն իրենց պար-տությունների լուրերն ամեն կերպ գաղտնի էին պահում կայսրության բնակչությունից, իսկ թուրքական պաշտոնական զեկույցները վերածվել էին լակոնիկ «Ճակատներում վրայ նորոթին չկայ» արտահայտության: «Ամբողջ այդ ժամանակաշրջանում օսմանյան հանրային կարծիքը Եվրո-պայի մեջ ձեռք բերված հաղթանակների լուրերով օրորվեցավ»:²⁴

Պոլսահայ պարբերականներից հատկապես «Ազատամարտը» առանձնակի հալածանքների առարկա էր, չնայած նրա շատ պարկեշտ կեցվածքին: Թերթի յուրաքանչյուր բառ, յուրաքանչյուր արտահայտու-թյուն բացասաբար էր մեկնաբանվում և թշնամաբար ընդունվում: Թերթի

խմբագրությունը, չկարողանալով տանել թուրքական պետական և ոչ պետական կամայականությունները, ցանկանում էր ընդհանրապես դադարեցնել թերթի հրատարակումը, փակել խմբագրությունը, բայց «որովհետև այդ բանը պետք է մեկնաբանվեր իբրև հակացույց կառավարությանը և պիտի վնասեր ամբողջ թուրքահայ ժողովրդին» շարունակում իր հրատարակությունը: Մակայն «թուրքերի համերոության բաժակը լցվեց» և մի շատ չնչին պատճառով, 1915թ. մարտի համարներից մեկում մի լուսանկարի հրապարակումից հետո թերթը փակվեց, իսկ պատասխանատու տնօրենը՝ Կ. Փաշայանը, աքսորվեց:²⁵ Թուրքական իշխանությունները բռնազրավեցին նաև թերթի խմբագրության ողջ արխիվը:²⁶

Նման ճակատագրի էին դատապարտված նաև թուրքահայ մյուս պարբերականները: 1915թ. մարտին թուրքական իշխանությունները Թեոդիկի 1915թ. «Ամենուն տարեցույցի» հատորը հայտարարեցին օրենքից դուրս, իսկ Թեոդիկի դեմ պետական դավաճանության մեղադրանք հարուցվեց: Դա արվեց տարեգիրքը պաշտոնական գրաքննությանը անցնելուց և լույս տեսնելուց հետո: 1915թ. մարտի 13-ին Թուրքիայի պատերազմական ատյանը հարցաքննության կանչեց «Ամենուն տարեցույցի» խմբագիր Թեոդիկին, հրատարակիչ՝ Մ. Հովակիմյանին և գրաքննիչ Ե. Յուսուֆյանին: Պատճառը՝ 1915թ. տարեգրքում ռուսական բանակի հայ զինվորների կենսագրությունների ու լուսանկարների և Գլադսոնի 1897թ. արտասանած ճառից մի հատվածի տպագրությունն էր, ուր ասվում էր, թե հայերին օգնության ձեռք մեկնելը քրիստոնյա, քաղաքակիրթ աշխարհի պարտքն է:²⁷ 1915թ. ապրիլի 7-ին Թեոդիկը և Մ. Հովակիմյանը դատապարտվեցին մեկ տարվա ազատագրկաման և ուղարկվեցին Կ. Պոլսի կենտրոնական բանտ: Ազատ արձակելուց մի քանի օր անց Թեոդիկին տրվեց աքսորի հրաման և ուղեկցվեց Կալկաթայի նավահանգիստ և աքսորյալների խմբի հետ ուղարկվեց Դ-եր Չոր:²⁸

Ընդահանուր առմամբ, ինչպես դիպուկ բնորոշում է Ա. Չոպանյանը «Մշակում» հրապարակվող «Զրոնիկ» հոդվածաշարում, հայ միտքը Թուրքիայում գտնվում էր «անհավոր կաշկանդումին մեջ», «սովիլ անեղ, քան ինչ-որ էր Համիդի օրով...»:²⁹ Կ. Պոլսում ձևականորեն հրատարակվող մի քանի հայկական թերթեր իրենց մեջ ոչինչ չպետք է պարունակեին հայության նկատմամբ կիրառվող հալածանքների, տեղահանության, ունեզրկման և կոտորածների մասին: Ինչպես գրում է Բոստոնում հրատարակվող «Ազգ» օրաթերթը, «Կ. Պոլսի «Բյուզանդիզմ» թերթը հրատարակվում էր երկու էջով: Թերթի ամունը գրված էր նախ թուրքերենով, հետո միայն հայերենով: Թերթի մեծ մասը լցված էր թուրքական և գերմանական թերթերից քաղված պատերազմական լուրերով, գերմանական գործակալության հեռագիրներով և պաշտոնական զեկույցներով, ողորձ երբեմն ծաղրելի աստիճան միակողմանի էին, և հայտնի էր, որ նախապես խմբագրված էին թուրք ժողովուրդը հանդարտեցնելու և նրան վստահություն ներշնչելու դիտումով»:³⁰

Թերթերին թույլ չէր տրվում լուսաբանել առօրյա տեղի ունեցող իրադարձությունները: Այսպես՝ արգելվեց ժողովրդի վրա ազդելու համար թուրքական կառավարության կողմից կախաղան բարձրացված 12 հայերի մասին թերթերում բացատրություններ տալը:³¹

Ինչպես վկայում է ականավոր լեզվաբան Հ. Աճառյանը, Աբդուլ Համիդի զանակալության տարիներին հայերը, հատկապես Կ. Պոլսում, հարկադրված էին արգելված բառերի փոխարեն մոր բառեր գործածել.

«օրինակ՝ Հայաստան ասելու տեղը ասում էին Վերին Միջագետք կամ Ծիծեռնակի երկիր»:³²

Երիտթուրքական իշխանությունները երկրում և նրա սահմաններից դուրս, ամբողջովին իրենց ձեռքը վերցնելով տեղեկատվության շարժը, միաժամանակ կեղծ, ստահող, ազգամիջյան թշնամանք հրահրող լուրեր, հերյուրանքեր, ամեն տեսակ ապատեղեկատվություն էին տարածում: Ինչպես գրում է Նյու Յորքի «Կոչնակ» թերթը, «Էնվերյան խմբակցությունը սկսում է մահմեդական ժողովրդին գրգռող հրատարակություններ և գրություններ հրապարակել և տարածել՝ դրանով ցանկանալով պատերազմի մեջ ներգրավել մահմեդական ազգաբնակչության բոլոր խավերին, զրգռել թուրք խուժանի մոլեռանդությունը, կրոնասիրությունը և սուրբ պատերազմ (ջիհադ) հայտարարել»:³³

Համաշխարհային պատերազմի սկզբում, մինչև Թուրքիայի մուտքը պատերազմ, արևմտահայության նկատմամբ կիրառվող տարաբնույթ հալածանքների պաշտոնական պատճառաբանության մեջ, որն այն ժամանակ անընդհատ կրկնվում էր իթթիհատական կառավարության, ինչպես նաև գերմանական պաշտոնական շրջանների հրապարակած մի շարք հայտարարություններում, հատկապես շեշտվում էր հայերի կողմից թուրքական բանակից «զանգվածային» դասալքության փաստը:³⁴ Թուրքական իշխանությունները պատերազմի առաջին օրերից հայ դասալիքների հարցն արհեստականորեն վերածեցին քաղաքական սուր հարցի և այն օգտագործեցին որպես ամօրինականությունները, բռնությունները, հայ բնակչության նկատմամբ պատժիչ միջոցառումներն արդարացնող կովան:

1914թ. վերջին և 1915թ. սկզբին պատերազմում կրելով առաջին լուրջ պարտությունները, թուրքական իշխանությունները նոր քափով և ավելի կատարելագործված սկսեցին տարածել ապատեղեկատվությունը:

Թալեաթը և նրա գործակիցները մամուլում աղմկաբարություն սարքեցին իրենց ռազմական անհաջողությունների մեջ հայ կամավորների ունեցած դերի շուրջ:³⁵ Նրանք աչ ու ձախ հայտարարում էին, որ «իրենք մինչև օրս ռուսական զորքի երես չեն տեսել և իրենց դեմ կռվում էին հայերի 70000-անոց կամավորականների զնդերը»:³⁶ Դրանով թուրքական իշխանությունները ցանկանում էին նախ՝ զրգռել մահմեդական բնակչությանը հայերի դեմ՝ վերջիններիս մեղադրելով իրենց անհաջողությունների մեջ, ինչպես նաև համաշխարհային հասարակայնությունից քղադրել իրենց ոճրագործ պլանները: Նման գործելակերպը բացահայտ հրահրումներ էին:³⁷ Ինչպես գրում է Վ. Տերյանը «Հայ կամավորական խմբերի հանդես գալը երիտասարդ թուրքերի կառավարությունն օգտագործեց իբրև պաշտոնական քղադրվում և արդարացում հալածական միջոցներ ձեռք առնելու համար, որոնք իբր թե թելադրվում էին «ռազմական ժամանակով» ընդդեմ «ապստամբ», «դավաճան» հայերի»:³⁸

«Ռուս-թուրքական պատերազմի սկսվելուց հետո, - գրում է բժիշկ Ե. Մինասյանը Թիֆլիսի «Վան-Տոսպ» շաբաթաթերթում տպագրված «Էրզրումի և շրջակայքի հայերի վիճակի մասին» հոդվածում, - թուրքերը ուզում էին սիրաշահել հայերին, նրանց էլ մասնակից անելու համար Ռուսաստանի դեմ իրենց ծրագրած ձեռնարկներին, բայց հայերը զգուշանում էին ծուղակ ընկնելուց և թուրքերին առարկում էին, թե իրենց կողմից լինելիք մասնակցությունը վտանգի մեջ կգցի Կովկասում ապրող իրենց միլիոնավոր արյունակիցների գոյությունը: Թուրքերը ավելի չեն առարկում:

Սակայն Սարիղամիշի պարտությունից հետո թուրքերի տրամադրվածությունը հայերի նկատմամբ կտրուկ փոխվում է, երբ թուրքերի մեջ լուր է տարածվում, թե իրենց դեմ կռվում են հայ կամավորները, որոնք իբր թե բանդում են թուրքերի գյուղերը և կոտորում բնակիչներին:

Տրամադրությունները հետզհետե լարվում են հայերի հանդեպ, մանավանդ մոլլաների և հատուկ քարոզիչների միջոցով:³⁹ Նույն պատկերն է ներկայացնում նաև Ա. Սկրտչյանը «Ժնուս զավառի կոտորածը» հոդվածում:⁴⁰ Փաստորեն թուրքական իշխանությունները ոռոս-թուրքական պատերազմի սկսվելուց հետո, համոզվելով, որ անհնար է թուրքահայությանը հանել ռուսական բանակի դեմ, շրջանառության մեջ դրեցին հայերին վարկաբեկող, որպես բջնամի տարր աչպանող, դրանով անվստահության և թշմանանքի մթնոլորտ ստեղծող ապատեղեկատվական իրենց բոլոր միջոցները:

1915թ. ապրիլին, ձեռնամուխ լինելով հայերի բնաջնջմանը, երիտ-թուրքերը ապատեղեկատվության բնագավառում անցան նոր գործելակերպի՝ հայերին մեղադրելով բացի ռուսամետությունից, նաև հեղափոխական տրամադրություններ ունենալու և ապստամբություններ կազմակերպելու մեջ: Թուրքական իշխանությունները 1915թ. մայիսի 24-ին Մեծ տերությունների հրապարակած համատեղ հայտարարությանը տված պատասխանում, հերքելով դաշնակիցների մեղադրանքները, իրենց հերքին հայերին մեղադրեցին Անտանտի պետությունների հովանավորությամբ թուրքիայում հեղափոխական կազմակերպություններ հիմնելու, զենք ստանալու և ապստամբելու, ինչպես նաև կամավորական ջոկատներ կազմելու և թուրքիայի դեմ կռվելու մեջ, որոնց վերաբերյալ, իբր, կան բազմաթիվ փաստեր ու վավերագրեր, որոնք «Բարձրագույն Դռտը (Բաբը ալի) հանրային կարծիքը լուսաբանելու միտումով, պատեհ առիթով, պիտի հրատարակե՝ իր բոլոր մանրամասնություններով»:⁴¹

Ինչպես Ռուս-թուրքական պատերազմի մեջ մտնելուց առաջ, այնպես էլ պատերազմի հայտարարումից հետո թուրքական իշխանությունները ձեռնամուխ եղան նաև Թուրքիայի տարածքում գտնվող օտարերկրացիներին և, հատկապես, միսիոներներին հայկական բնակավայրերից արտաքսելուն և լրատվությունից զրկելուն: Ահա թե ինչ է այդ մասին Բաբի «Արև» թերթին զրում սեփական թղթակից Տիգրանը Սոֆիայից 1915թ. հուլիսի 25-ին. «Պատերազմի հայտարարումից ի վեր Հայաստանի և Թուրքիայի բոլոր վայրերի օտար միսիոներները չեզոքացվեցին. նախ ամերիկյան միսիոներները, հատկապես հայկական բնակավայրերի մեջ: Թուրքական կառավարիչները դեռ 1915թ. հունվարին ամերիկյան միսիոներներին բռնեցին Կարինից. բռնեցին նաև ամերիկյան Կարմիր խաչին: Այնուհետև խիստ միջոցներ ձեռք առան արգելելու զանազան շրջանների միսիոներների միջև փոխհարաբերությունները: Նրանց հնարավորություն տրվեց միայն հեռագրով հարաբերվել Միսթր Փիթի հետ (որը նստում էր Կ. Պոլսում) դրամական խնդիրների համար, իսկ խստիվ արգելվեց իրար մեջ թղթակցելը կամ հեռագրական կապեր պահելը:

Մի որոշ ժամանակ անց այս արգելքները տարածվեցին նաև գերմանացի այն հազվագույտ անհատների վրա, որոնք չկարողացան անտարբեր և կույր ձևանալ հայկական սարսափների նկատմամբ: Հետզհետե հեռացվեցին շվեյցարիացի, շվեդ և այլ երկրների միսիոներները և պատահական դեմքերը: Եվ երբ այս կերպ երկիրը քաղաքականապես մաքրվեց հսկող ու անզադտնապահ աչքերից, այն ժամանակ թուրքական

կառավարությունը սկսեց գործադրել Մեծ եղեռնը»:⁴²

Թուրքական իշխանությունները, ունահարելով միջազգային դիվանագիտական նորմերը, անտանելի վիճակ էին ստեղծել նաև օտարերկրյա դիվանագիտական ներկայացուցիչների, հատկապես հյուպատոսների համար: Ինչպես գրում է Էրզումում Ռուսաստանի գլխավոր հյուպատոս Ադամովը 1914թ. օգոստոսի 7-ի իր հաղորդագրության մեջ, ինքը փաստորեն «ծերքակաված» է, իսկ հյուպատոսության մյուս աշխատակիցները բացահայտ ենթարկվում են հալածանքների, որոնցից քարտուղար Սամսոնովին թուրքական ժանդարմները նույնիսկ փորձում են սպանել:⁴³

Ամփոփենք. արևմտահայության ցեղասպանության իրականացման ընթացքում, համաշխարհային պատերազմի հենց սկզբից և, հատկապես, 1915-1916թթ. թուրքական իշխանություններն առավելագույն սահմանափակումներ էին կիրառում Օսմանյան կայսրությունում և նրա սահմաններից դուրս ցեղասպանության մասին, ինչպես նաև աննպատակահարմար այլ տեղեկատվության նկատմամբ, միաժամանակ գործողության մեջ դնելով ապատեղեկատվության հզոր մեքենան:

Այնուամենայնիվ, հակառակ երիտթուրքերի բոլոր ջանքերին, արևմտահայության նկատմամբ կիրառվող հալածանքների, բռնությունների, կեղեքումների, բռնազաղթի ու կոտորածների մասին լուրերը շուտով տարածվեցին աշխարհով մեկ, և ինչպես հայության մյուս հատվածները, այնպես էլ միջազգային հանրությունը տեղյակ դարձան հայերի ցեղասպանության մանրամասներին:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ¹ Желтяков А. Печать в общественно-политической и культурной жизни Турция, М., 1972, ст. 93:
- ² Խառատյան Ա. Արևմտահայ պարբերական մամուլը և գրաքննությունը Օսմանյան Թուրքիայում (1857-1908), Ե., 1989, էջ 6:
- ³ Հայերի ցեղասպանությունը: Ըստ երրիտթուրքերի դատավարության վիստաթոթերի (կազմ. Փափազյան Ա.), Ե., 1988, էջ 7:
- ⁴ Կիրակոսյան Ջ. Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը (1914-1916 թթ.), Ե., 1967, էջ 111:
- ⁵ Osman Nuri, Hamid sani ve devr-i sultanati, Istanbul, 1327 (1910), s. 582-583.
- ⁶ Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ ԳԱԱ, հ. VI, Ե., 1981, էջ 878:
- ⁷ Նույն տեղում:
- ⁸ Նույն տեղում, էջ 879:
- ⁹ Արզումանյան Մ. Հայաստան 1914-1917, Ե., 1969, էջ 25:
- ¹⁰ Տե՛ս, Կիրակոսյան Ջ. Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, գիրք I, Ե., 1982, էջ 177:
- ¹¹ Ադամովյան Մ. Թեոդիկի «Ամենուն տարեցույցը», Ե., 1981, էջ 26:
- ¹² Նշվ. աշխ., էջ 27:
- ¹³ «Ամենուն տարեցույցը», Կ. Պոլիս, 1916-1920թթ., էջ 270:
- ¹⁴ «Հորիզոն», Թիֆլիս, 21 փետրվարի 1915թ., N 40:
- ¹⁵ Նշվ. պարբերականը, 10 ապրիլի 1915թ., N 76:
- ¹⁶ Նույն տեղում:
- ¹⁷ «Արարատ», Ս. Էջմիածին, փետրվար-մարտ 1915թ., էջ 152:
- ¹⁸ «Մշակ», Թիֆլիս, 9 ապրիլի 1915թ., N 72:
- ¹⁹ «Հորիզոն», Թիֆլիս, 10 ապրիլի 1915թ., N 76:

- ²⁰ Նույն տեղում:
- ²¹ «Մշակ», Թիֆլիս, 9 ապրիլի 1915թ., N 72:
- ²² «Հորիզոն», Թիֆլիս, 21 փետրվարի 1915թ., N 40:
- ²³ Նշվ. պարբերականը, 22 փետրվարի 1915թ., N 41:
- ²⁴ Նույն տեղում, էջ 73:
- ²⁵ «Հորիզոն», Թիֆլիս, 10 ապրիլի 1915թ., N 76:
- ²⁶ Նշվ. պարբերականը, 16 մայիսի 1915թ., N 106:
- ²⁷ Տե՛ս, «Ամենուն տարեցույցը», Կ. Պոլիս, 1915թ.:
- ²⁸ Աղանալյան Մ. Նշվ. աշխ., էջ 36-38.:
- ²⁹ «Մշակ», Թիֆլիս, 28 հունվարի 1915թ., N 19:
- ³⁰ «Ազգ», Բոստոն, 17 հոկտեմբերի 1915թ., N 21:
- ³¹ «Աշխատանք», Երևան, 24 սեպտեմբերի 1916թ., N 42:
- Գրաքննչական դաժան հալածանքներից խուսափելու համար հայ մտավորականները երբեմն դիմում էին զանազան հնարքների: Դեռևս XIX դարի կեսերին, խույս տալու համար լրտեսներից և գրաքննիչներից, նրանք ստեղծել էին այսպես ասած՝ զաղտնալեզու: Օրինակ՝ շրջապատի քաղաքական անցուղարժը քննարկելու ժամանակ նրանք Մոսկամեդ բառի փոխարեն օգտագործում էին «գուժում» բառը, սուլթանի փոխարեն՝ «արքա», թուրքերին կոչում էին «այլազգի», տուրքին՝ «վճարանք», ենիչերիին՝ «փատվոր», մեծ վեզիրին՝ «մատնիչ» և այլն: «Անգլիացիները և ֆրանսիացիները պատերազմ են հայտարարել Ռուսաստանի դեմ» նախադասությունը զաղտնալեզվում վերածվում էր «Կրակոտն ու կարմիր լաթը ծեծ ունին ձուկ ոտողի հետ» նախադասության: («Ամենուն տարեցույցը», Կ. Պոլիս, 1922թ., էջ 58): Ինչպես Թեոդիկն էր նշում՝ գրաքննության հետապնդումների հետևանքով երգիծարան Ա. Ալվազյանը 1902թ. գրած իր մի ինքնակենսագրականում ստիպված է եղել Մ. Նալբանդյանին անվանել «Պայառյան»:
- (Նույն տեղում, 1910թ., էջ 244):
- ³² Աճառյան Հ. Կյանքիս հուշերից, Ե., 1967, էջ 39:
- ³³ «Կույնակ», Նյու Յորք, 9 հունվարի 1915թ., N 2, էջ 42:
- ³⁴ Կիրակոսյան Ջ. Առաջին համաշխարհային պատերազմը ..., էջ 262:
- ³⁵ Hacobian A., Armenia and the War, London-New York, 1917, p. 78.
- ³⁶ «Հորիզոն», Թիֆլիս, 22 փետրվարի 1915թ., N 41:
- ³⁷ Կիրակոսյան Ջ., Առաջին համաշխարհային պատերազմը ..., էջ 257:
- ³⁸ Տեղյան Վ., Երկերի ժողովածու, հ. 1, Կ. Պոլիս, 1924, էջ 397:
- ³⁹ «Վան-Տոսպ», Թիֆլիս, 13 մարտի 1916թ., N 16:
- ⁴⁰ Նույն տեղում, 10 ապրիլի 1916թ., N 20:
- ⁴¹ Հուշամատյան Մեծ եղեռնի. 1915-1965, պատրաստեց՝ Գ. Սիարունյանը, Բեյրութ, 1965, էջ 1093:
- ⁴² «Արև», Բաքու, 13 օգոստոսի 1915թ., N 122:
- ⁴³ Արզումանյան Մ. Նշվ. աշխ., էջ 147:

Резюме

Цензура печати и информация
в Османской Турции в 1914-1916 гг.

Тигран Саакян

С начала Первой мировой войны младотурецкие власти постепенно и претворяя в жизнь Геноцид армян сконцентрировали свое внимание на ограничении потока информации как внутри страны, так и вне ее границ. Был запрещен сбор, распространение и, вообще, передвижение любой информации без разрешения конкретных органов власти. Имея перед собой опыт предшественников, в особенности опыт Авдула Гамида, они в стране утвердили строгую цензуру.

Внутри и вне границ Турции предпринятые ограничения против распространения информации получили невиданные размеры и стали более жесткими особенно после вступления Турции в войну и первых поражений. Турецкие власти стали с особой яростью распространять дезинформацию, которая, главным образом, была направлена против армянского населения страны.

Вышеупомянутая политика турецких властей имела цель:

1. лишить жителей страны точной информации и этим получить свободу действий, также временно утаить свои поражения,
2. лишить возможности сообщения между собой проживающих в разных частях страны армян, таким образом лишив их возможности прийти друг другу на помощь, а также не позволив им предсказать запланированный против них геноцид,
3. утаить от мирового сообщества положение внутри страны, а также те преследования, погромы, которые были предприняты против армян, вследствие чего было предотвращено посредничество международной общественности, в особенности – нейтральных стран,
4. путем дезинформации повудить мусульманское население страны против армян и использовать их для претворения антиармянской политики, а также – отрицать дошедшие до международной общественности известия о погромах и депортации армян,
5. оправдать действия, которые были предприняты против армян.

Summary

Censorship of Press and Undertaking of an Obstacle Against Movement of the Information in Ottoman Empire in 1914-1916.

Tigran Saakyan

From the beginning of the World War I the government of Young Turks planning and bringing to live step by step the Genocide of the Armenian people, focused their attention to the limitation of information inside and outside the country.

The collection and expansion of any kind of information was forbidden, as well as, any action without the permission and examination of authorities. Taking into consideration the experience of their ancestors, particularly the policy of Abdul Humid, they established brutal censorship in the country. The prohibition on the spread of information reached unpredictable proportion and cruelty especially when Turkey got engaged in the World War I and carried first losses. Wide-spread misinformation was generally against the Armenians.

The policy of Turkish authorities aimed

1. To deprive the population of true information, on this way obtaining freedom in their actions, besides, disguising their losses during the World War I,
2. To make impossible the contact between different Armenian communities depriving in this way of mutual assistance and spread of information, to keep them unaware of upcoming disaster,
3. To disguise the current situation in the territory of Turkey (the intimidation, extermination, torture, dehumanization of Armenians) from international communities in this way preventing their anger and interference of international communities especially those of neutral countries,
4. To encourage Muslim population of the country in anti-Armenian activities through misinformation and use their power to realize their premeditated and planned policy of Genocide, as well as reject any information connected with the intimidation, deportation, massacre of Armenians, making themselves free responsibility,
5. To justify the policy of Turkish government, which was against the Armenian population.